



1. ՄԱՐԳՐՏԱՇԱՐ

Կէլնի-կէլնի մեյ որբեվերի մարդ, ինոր կէլնի մեյ լաճ, մեյ աղջիկ, էն աղջիկ շատ խորոտ կէլնի: Էդա մարդ կը փռսայվի. մեյ խատ կնիկ մը կամնի, էդա կնկան էլ մեյ խատ գեշ աղջիկ մը կէլնի: Էդա կնիկ խորթ տղեյներաց չուգե, ինչի որ ուր խորթ աղջիկ ինան տղեն խորոտ ին, ուր աղջիկ գեշ ի:

Մեյ օր իրկան կասի. - Քեա, մարդ: դու որ ծիկ կը սիրես, պիտի էսա տղեն ինան էսա աղջիկ կուրիսցուցես:

Մարդ տեսավ, որ կնիկ շատ զոռ արաց, ուր իրիսի հայեն գնաց, ուր ճար կտրավ, ասաց. - Վախճամ իտին գեշ էլնի, չանք առաջին:

Էլավ ուր կոռ ու կոռտիկ, լաճ ու աղջիկ առեց, խորթ մերն էլ էրկու խատ շոռ կլոճ թխեց, խետքեր իղիր:

Գնացին, գնացին, շատ ու քիչ գնացին, Աստված գիտի, տղեյներաց- ոտքեր ցավաց. ասին. - Պապո, մե դո՞ր կը տանես. էսա քյարերաց մեջ մեր ձեռ ու ոտք կտռտավ, մեր կատամ կտռռավ:

Պապոն ասաց. - Էյ ծագերս, քյար, քռեն ինչ կանտար անգութ, ան- ճիկեր էղնի, էլմ չանք խորթ մեր աղեյ կէլնի:

Աման պապոն տեսավ օր ծագեր նեղացեր ին, լեզվըներ կախվեր, նողըներ կտրեր էր, սրտըներ նվաղեր էր, չոք զարկած անտեր գյառու պես, ընկյան խովքերի տակ, կը խվին: Պապոն էս տեսնալու պես ձեռ իտուր ուր մուրուս, աչքեր արտասնքախառ կոռ իզար գետին, կոռտին իթալ վրեն, խով արաց վեր ուր ծագերաց, ինքն էլ նստավ, գյուլ-գյուլ արնախառն արտըսունք թափեց վեր ուր երկու անտեր ծագերաց:

Աղջիկը արթնացավ, ասաց. - Պապո, մենք անոթի ինք:

- Մե փշուր մե սապր արա, - ասաց, - թող աղբերդ էլ զարթնի:

Կտորմ մնացին, չմնացին, աղբերն էլ զարթնավ, պապոն ուր քյամկի վերեւն ալմախ քյակեց, ուր կնկա տված էրկու թափթափեն խանեց, տվեց տղեյներաց՝ տղեյներ կերան:

Շատ միտք արաց ուր անզգամ կնկյան թողնելու, ուր խեղճ ձգեր առնել ծրարվել, ամա չկյարցավ. տղեյներաց անտեր թողնելով՝ էլավ, գնաց:

Քիչ մնաց՝ տղեյներ արթնցան, տեսան կոռ կա, կոռտիկ կա, պապոն չկա. էլան անտեր գյառու պես, ըս տեղ ընկեան, ըն տեղ ընկեան:

- Պա ա՛ ա պե՛ռ, պա ա՛ ա պե՛ռ, - կանչեցին, աման պապր չգնտան. ճարեր կտրավ, էկան նստան, իրենց խորթ մոր տված շոռ կլոճ կերան: Քիչ մնացին, շատ մնացին, ծարվըցան, խասան մեյ տեղ մը գոմշու ոտաց տեղ ջուր կեր, աղբեր ասաց. - Տատո, ես ծարավ եմ:

Քյորն էլ ասաց. - Էսա տեղեն որ խմես՝ գոմեշ կը դառնաս, ես քե չեմ կանա շախե:

Կովի ոտաց տեղ խասավ, էլմ սզընա ասաց, ծիու խասավ, էլմ սզընա, եղնիկի ոտաց տեղ խասավ, էլմ սզընա:

- Տատո՛, տատո՛, ես ծարավ եմ, - ասաց էլմ:

- Աղբեր, եղնիկ կը դառնաս, շատ կը փախնիս, քե սարեր, քյարեր կը թալես, ծիզնից կը զատանաս, ծի կարոտամաշ կանես:

Խասան գյառու ոտաց տեղ, ասաց. - Տատո՛, Սուրբ Գեորգ գիտի, ես պիտի խմեմ:

Քյոր տեսավ ճար չկա, ուր աղբեր ուր թալավ կանի, ասաց. - Ճայնամ, մեռնելուց աղեկ ի, թող էղնի գյառ, վեր սրտիս կը պախեմ, սկուն իմ կարոտ կառնիմ:

Տղեն էր, գնաց խմավ, էլավ գյառ, ընկյնավ քյուրոջ իտիվից:

Կերթան, քյորն էլ կը ծարվընա, կերթան, կը խասնին մեյ աղբրի, որ են տեղ չուխտ չինարի ծառ տնկված էր՝ են տեղ աղջիկ ջուր կը խմի, գյառնիկ աղբոր կյապի էդա կանանչ խոտերաց մեջ արածալով, ինք կէլնի ծառի վերեն, սարին տեղ մը կը նստի քյարկախ անելու: Էն տեղեն կը տեսնա թագավորի խոլամներ, ծիանքտեր կը բերեն, որ ջրեն, աղջկան շուք կառնի աղբրի վրեն, ծիանք կը խրտնին, կը թողնեն, փախնեն: Կերթան թագավորու լաճուն կը բերեն. թագավորի լաճ կը լսի, կը թեպոի, կասի. - Յա՛, յա՛, էսա ի՞նչ էլերի, չէլնի՞ ոյուշման իկե:

Կէլնի կյուրգ կառնի ծեռ, ծիանք կառնի, կերթա. աջքը ըղեղ կը թալի, ըն տեղ կը թալի, կասի. - Կյո՛, ես ասեմ չանք լյուսնակ, դու ասա՛ չանք

արև, չուխտ իրես կը տեսնվի. դաստա-դաստա բերնից վարդ, ըռահան կը թափի. աչքեր կյո, չանք բարի լուսու աստղեր կը պսպղան:

Թագավորու լաճու աչքեր մնաց բաց, բերնին ջուր գնաց, ասաց. - Աղջի՛, քե որ՛ խովն ի բիրի ըստե:

Աղջիկը ասաց. - Խորթ մոր դարտ:

Ասաց. - Աղջի՛կ, եղա տեղ կա՛ց, ես չու՛մ գամ, քե տաննեմ:

Էն դեհեն քորդու կճեն որ իկեր էր, ծաղիկ ժողվեր, էսա հմեն կը լսի: Թագավորու լաճ որ թողնի, կէթա, կուզյա, իրեք դիր կը պոռա. - Աղջի, ցած էջի:

Կը տեսնի օր աղջիկ չէ էջնի, սև խագած պառավմ, սև խագած կճեն, համան փեշեր կը քշտի, կասի. «Յա բորիկ սրբեր, անոթի քրդեր», ու թռնի ծառ, աղջկան լանկեն կը զանի, կը թալի մեջ կյոլին:

Կտոմ կը մնա, թագավորու լաճ կուզյա, կիրիշկի վեր, կը տեսնա ոչ էն ճրյան ի, ոչ էն աչքերն ի, մեկ էլ կը մեզի վեր ուր, կասի ուրին-ուրին. «Պալքի ես կը խապվիմ, աղջիկն էն աղջիկն ի», կը խարցուցի աղջկան.

- Աղջի՛, քե ի՞նչ էլեր ի, ոյու իմ աչիչ փոխվեր իս:

Աղջիյն ի, կասի. - Աստըվորիս վերեն ճեհելին պախթ չկա, ոյու իմ դարտից խապար ես, աչքերսի քոռցավ քյու ճանքախ իրիշկելով, էրեսիս գյին գնաց արևուց էրվելով, սիրտս սիվցավ քյո կարոտով:

Թագավորու լաճն է, կասի. - Իսուր լեզուն էլ ուր խետ քաղցր ի:

Համան կճեն ծառից կէջուցի, թալի ծիու թարկ, կառնի գյաննիկ աղբեր, չու՛մ տու՛ն մեկ աչքաբացի կը խասնի: Կը էրթան յիթ օր, յիթ գիշեր խարսնիս կանեն, խետ ճատի պառավու աղջկան կը փսակեն: Փսակյելուց սորա՝ իրեք գիշեր, իրեք ցերեք կ'ընցնի վեր թագավորու լաճուն, թագավորի լաճ կը տեսնա, որ էսա աղջիկ էնոր տեսած աղջիկ չի, էն տեսածն էլ յա էրազ էր, յա փերի:

Էս թող էստեղ մնա, գնանք տեխ մեր աղջիկ:

Աղջիկ կյոլու պռուկ շատ մնալով՝ քիչ մնալով՝ Աստուծո խրամանքով կէլնի փունջ մանուշակ չիմանքտերաց մեջ. գիշեր աստղերաց մայիլ կանի, ցերեկը՝ արեգական. լուսնրկի շաղով ուր իրես կը լվա, գիշեր-ցերեկ դառն արցունք կը թափի գյաննիկ աղբոր խամար:

Շատ կ'ընցնի, քիչ կ'ընցնի, մե օր էլ տեսանք թագավորու ծիանք էլմ էկան էդ աղբոր վերեն ջուր խմելու: Ջուր խմեցին. մեյ ծին բերան էթալ, փունջ մանուշակ կերավ. փունջ մանուշակ էլավ մատնիք ծիու փորի մեջ:

Թագավորի ծիանք շատ խորոտ էլնելուն խամար թագավոր մեյ պառավ էր բերե, որ ծիանքտերաց վերեն աչիչ ուլինք կարեր, ծիանք աչք չառնեն: Էդա պառավն ի հըմեն օր կէթա, եր դոր կուզյա էդա ծիուն, որ

մատնիք ինոր փորն էր, ձին կը փռնգտա. մատնիք ոյիւս կը թռնի մեջ պառվու գյոգին. պառավ կառնի կէրթա տուն. կը տիսնա մե խատ խրեղեն մատնիք, կը դնի ուրանց պատխան: Պառավ որ հըմեն օր կէրթա թագավորու տուն խզմթին, դառնա կուգյա, կը տիսնա տախտ ավիլուկ, խաց թրչուկ, ցան-ցախ դրուկ, սոխն ստկուկ. հըմեն բան հազր տեղ պա տեղ արած, չարապրած, գիտիս կյո պառվու առջինեկ լաճմ՝ էլներ փսայված՝ թագա խարս բերած:

Պառավ էսա բաներ որ կը տիսնա, կը շշկոի, կը թեպոի, կը զարմանա, մնա կասի. - Յարապ, էսա ո՞վ ի, որ էսա բաներ կանի, չարերն ին, թե խրիշտակներ, փերիքն ին, թե դրկցի աղջիկներ:

Սորա պառավ օրմ չէ, օրմ ակլա կը դնի, ուրենց ավելուցքի կողով կը կործի վեր ուր, կը նստի. տանտան պատի տակ, տիսնա, խենք էսա ո՞վ ի, կանի: Աղջիկն ի առանց գիտնալյու պառվու արած, կէյնի ավել կառնի ձեռ, պաշլայի ավել անել. ավելուց բիրի, կոլունի կողովի մոտ, կողով կը վերցի, որ ավելուցք մեջ լցի, մեկ էլ պառավ կողովի տկեն շոտ մը ձեռ կը թալի, կը բռնի. կը տիսնա որ ի՞նչ՝ խուռնիկ-խրեղեն աղջիկ ի, աչքեր չուխտ զմրուխտ մը, իրեսներ կյո քանք լիուսնակ մը. կասի. - Դիւ ո՞վ ես, որ իմ բաներ կանես:

Կասի. - Անմեր տղա եմ:

Աղջիկ պառվուն կասի. - Դիւ ո՞վ ես:

Կասի. - Անտղա մեր եմ:

Կասի. - Ես քե տղա, դու ինձի մեր:

Օր օր կը նցնի, շաբաթ կը նցնի, պառավ ինան աղջիկ սիրով յոմյուր կընցուցին. թագավորի տան ուլնիքներ պառավ կը բերի մեյ տեղ կը շարեն: Մեկ օր պառավ կուգյա, նաղլ կանի աղջկան, կասի. - Աղջի, էսօր թագավորը ուր ծիանք, էրկերկու, տաս-տաս ցվոնց ըստեղ, ըստեղ պախ:

Աղջիկն ասաց. - Ա՛յ մարե, ընչի՞ մե խատ էլ չբերեցիր, մենք պախենք:

Մերն է, աղջկան խաթր չկոտրելու խամար կէրթա, թագավորուց ձի մը կուգի. թագավորն է, կասի. - Ա՛յ պառավ, տյու ի՞նչ ձի պիտի կանաս պախ:

Պառավն է, կասի. - Ինչ ձի կուտաս, տուր:

Թագավորն է, կասի. - Մեյ խատ էնա չեչել, թոփալ, մեկ աչք կոր, Աստղծո կազապ ծիանքտերաց տվեք, թող պառավ տանի:

Պառավը կառնի, կը բերի տուն:

Խեղճ աղջիկն ի, որ կը տիսնա, կասի. - Ես էլ իմ բաղդից ի:

Աղջիկն ի, պաշլայեց ծիուն եմ տալ, թմրել, շախիլ, մաժել, մաժմըժել, սկուն որ ծին մե ամսվան մեջ էլավ Արճակու ծովից քաշված խրեղեն ծի: Որ թագավորու վատեն կը լցվի, կէլնի ծիաք ժողվելու: Վիր որ տվիր էր, սաղը խատուկ ետ առեց, ծողայլու խամար ասաց. - Մեյ գացեք, էն պառվու տուն, տեսեք, էն ծիու ոսկրներ դեռ"ր է խորեր:

Թագավորու մարդեր էկան պառվու տուն, գնացին փայախ, տեսան, ի"նչ" դեյ աժթախարմ կայնե էն տեղ. որ հըմեն փնջալեն գետնի տկեն թոզ-դուման կը խանի, հըմեն խրխնջալիւն տիրոջ դյուշման չուր խորոսան կը փախցուցի: Իսոնք որ տեսան, չկղշան ներս մտնել, կանչեցին պառվուն, պառավն էլ կանչեց աղջկան: Աղջիկ գնաց տեխ ծին, իդա կատողուկ ծին խետ աղջկան տիսան, ես ասեմ արկուլ արջվի մեղրի մոմի պես խալավ, դյու ասա, բոցի վերվի արդար եղի պես խալավ կընցկոտվավ, քյաչկմշկվավ, էկավ աղջկան ձեռ պագեց: Աղջիկ էրկու խապար փսփսաց ակնջին, խտուր թագավորու խոլամներաց ձեռ, տարան: Թագավոր ուր քյիշկից որ տիսավ, գլխուց մուխն էլավ, ասաց. - Ծո, վա՛յ, մոտ էս ճատու պառավ ի"նչ շնորի կա:

Թագավորու լաճ էլ ասաց. - Քյաշկե ես մեկ էլ փսայվի, էսա ծին խեծնի, իմ սրով, նետով ամպեր պատռտի:

Զին տարան, կապեցին տասնկոթը գութնի գնճիլով, հիսունը խինգ կաշե թոկերով. գնճիլներ Վարազա սար կնապեցին, թոկեր եղերով բիպ-նեցին:

Գյանք մկա տեխ մեր ճատին. մեջ ճատուց, մեջ թագավորու լաճուց քյած մը կը ծնի, քիշեր ցերեկ թագավորու լաճուն անդադար կանի, չթողե քնի, թագավորու լաճն է, ճար մեջ կը կտրի, կօրոխկի դավրեշներ կը կանչի, կասի. - էկե՛ք, տեսե՛ք, յարապ, էս ի"նչ պտուղ ի:

Դավրեշներ կասին. - Թագավոր ապրած, էսա քյած խալալ սիրու գավակ չի, իդոր մեյ ճար կա, օրոխկիս ըստեղ մե խատ պառվու մոտ աղջիկ մը կա, էն աղջիկ կը բիրիս, նստի իդոր մոտ մարգրիտ շարի, չարվար հըմեն թարավ կանի: Թագավոր ըստեղ կինի, ըստեղ կինի, ոչ էդա պառավ կարա կը նտնի, ոչ էդա պառվու աղջիկ, մեկ էլ կը մեգի, վեր ուր կասի. «Ծո՛, վա՛յ, ջոջ էշ փակյախն եմ մոռցե, չէլնի" էսա մեր պառվու տուն ի»:

Կօրոխկի պառվու մոտ, խեչ աղջկան, կանչի:

Պառավն է, աղջիկ կառնի, կերթա թագավորու տուն. աման քյիխք մեկ քյաշի աղջկան էրեսի վերեն, մտածելով որ էն աղջիկ որ ծիանք-տերաց մեյիլ արաց էր, ճեհել մարդեր դահա շոտ ուր մեյիլ կանի:

Աղջիկն ի, կերթա, կը նստի օրորոցի մոտ, կօրորի, մարգրիտ կը շարի. մեյ տեխեն էլ ուր գլխու գյանգած դարտեր կուլա, գյառնիկ աղբոր

կարոտով կերվի, կիրիցի: Թագավորու լաճն ի, խորից սորա ծանտր-
ծանտր կը քնի:

Մեկ օր խառ-խառ էրազ կը տիսնա, շոտ կը զարթընի, աղոթընի
ճղճղված վախտ, մթան լուս-լուսու կռվով գյախ, գյոր ուր ժամխարն
հալա ուր գյիւղոյու ժամ չկանչած, լուսու մուլէն չկանչած, կը տիսնա որ
ինչ՝ Վարազա սարեն էկած էն անուշ Գեւվազ* ուր խետ կը բիրի անուշ
ծեն մը, որ դարտ ունեցողի դարտեր կը խովցուցեր, ճիւղներաց էլ շատ
բան միտք կիցգեր:

Թագավորու լաճն ի, աչքն էլ կը բանա, տիսնա որ տուն, տեղ, սար,
քյար, որն կուլա, որն կը խնդա ծենից, մեկ էլ վեր կը թռնի, կը վազի,
կ'երթա, տիսնա կեո էն աղջիկն ի, ուր դարտեր կուլա, կայնի, ականջ կանի
աղջկան խապրերաց: Թագավորու լաճու մագեր թիք-թիք կը կայնի, ինչ
որ կը տիսնա էսա աշխարհի մեջ հողածնի կալպութեն:

*- Ես ու իմ աղբեր, իմ մեր, իմ խեր՝ մարգրիտշար-մարգրիտշար.***

Մերսի, մեռավ, խերսի խորթ մեր իրե.

խորթ մերսի պապոյիս ջանին խասուց.

Ասաց.- Քյո տղէկներ ռատ պիտի անես.

Թե չէ, քե կնկնութեն չեմ անի.

խորթ մերսի շոռ կլոճ թխեց, մե կիրիցուց.

Պապոն մե ասաց. - Ա՛յ որդիք, էրթանք ի հանտ.

Ես ասի. - Պապո, ես ծարավ մեռա.

Առավ պապոն, տարավ մե վեր աղբրին.

էն տեղ ես ու իմ աղբեր ջուր կուշտ խմանք,

Գնացինք նստանք մեջ մե հանտիմ.

- Մենք էլմ ծարավ մեռանք, պապո՛.

Պապոս ասաց. - Գնացեք ինա սարին իտև.

Մենք էլանք, գնացինք որ ջուր խմենք.

Պապոս կոռ տնկեր, կոռտին թալեր վրեն.

էկանք որ կոռ կեր, կոռտին վրեն, պապոս չկեր.

Ասինք. - Պապոն դա չի, այ ավար, այ ավար,

Պապոն դա չի, ա՛յ ավա՛ր - ավա՛ր, ավա՛ր,

Առինք կոռ ու կոռտիկ, քյոր ու աղբեր, գնացինք

Գնացինք շատ ու քիչ, Աստված գինտի.

Աղբերս ասաց. - Տատո՛, ես ծարավ մեռա.

* Քամու անուն (ծ.ա.):

** «Մարգրիտ շար, մարգրիտ շար» -ը կրկնել ամեն տողի վերջը (ծ.ա.):

Ասի. - Աղբեր ջան, քե էլնիմ դուրալան.
 Գոմշու ոտաց տեղ խմիս՝ կէլնիս գոմեշ,
 Ես քե չեմ կարա պախիոր ու շախիոր.
 Ասաց էլմ. - Տատո՛ ջան, ես ծարավ մեռա.
 Ասի. - Եզան ոտաց տեղ խմես՝ կէլնիս եզ.
 Շատ ու քիչ գնացինք, աղբերս էլմ ասաց.
 - Տատո՛, ծարավ էրվա, ծարավ վառվա.
 Ասի. - Գյանու ոտաց տեղ է, խմի աղբեր ջան.
 Աղբերսի գյանու ոտաց տեղ կուշտ խմավ.
 Էղավ գյաննիկ, բոբռալեն ընկյնվ էտևսի.
 Շատ ու քիչ գնացինք, հանտիմ հասանք.
 Քյոր ու աղբեր նստանք շոռ կլոճ կերանք.
 Էլանք, գնացինք, աղբրիմ՝ հասանք.
 Էնա աղբրի վրեն ջուր կուշտ խմանք.
 Գյաննիկ աղբերսի կապեցի ծառի տակ.
 Ես էլ էլա չինարի ծառի վերեն.
 Ծառի վերեն քրկյախ դրի, քրկյախ արի.
 Թագավորու ծիանք էկան, ջուր խմեցին.
 Իմ շառավիղ տեսան, խրտնան փախան.
 Գնացին թագավորու լաճուն ասին.
 Թագավորու լաճ ծիանք առավ, էկավ.
 Իրիշկեց ջուր, տիսավ իմ շառավիղ.
 Իրիշկեց չինարի ծառ, ծիկ տիսավ.
 Ասաց. - Աղջի, դյու ինս ես, ճինս ես.
 - Ես Աստըժո ծառան եմ. - ասի.
 Ասաց. - Աղջի դյու կաց, ես իզամ, քե տանեմ.
 Թագավորու լաճ գնաց, դել չէր իկե.
 Քորոու կճե, մեր ու աղջիկ էկան.
 Կճեն ծիկ ասաց. - Աղջի, ծիկ էլ խան ծառ,
 Ինչ որ արաց՝ չխանի ծառ, ճար կտրավ.
 Մեր կզավ, կճեն էխան քյանկին, խանեց ծառ.
 Էկավ քրկյախ ձեռնես խլեց, ծիկ թալ տակ.
 Ես ընկյն մեջ քրին, էլա փունք մանուշակ.
 Թագավորու լաճ էկավ, իրիշկեց ծառ.
 Իրիշկեց, տիսավ էն աղջիկ չէի.
 Ասաց. - Աղջի, դյու ընչի՞ ղղսնա իս իլէ.
 Ասաց. - Էն կանտար իրիշկեր իմ, աչքերս շլվեր ի.
 Էն կանտար նստեր իմ արև, էրեսսի սևցեր ի.

Արև գարկեր՝ բերանսի քեդրվեր ի.
 Ասաց. - Աղջի՛, արի՛ ցած, քե տանեմ.
 Կճեն տարան, թագավորու լաճուն խետ փսակեցին.
 Իմ խորոտիկ գյնձնիկ աղբերն էլ տարան.
 Ես էլա փունջ մանուշակ Կապուտկողկաղբրի կողքին.
 Թագավորու ծին էկավ, փունջ մանուշակ կերավ.
 Չիու բերնի մեջ ես էլա օսկի մատնիք մը.
 Պառավ էկավ, ծիանքտերաց ուլինք կարեր,
 Էն ծին փոնգտաց, ես բերնեն դյուս ընկյա.
 Պառավ ծիկ տարավ, էդիր պատուխան.
 Ես էն մատնիքն ի, որ կէլենի աղջիկ.
 Էմեն օր թոնիր կը վառի, խաց կը թխի.
 Պառավ մեկ օր փեթակի իտև պախ իղիր.
 Ես էլմ էլա, դարպար սրբեցի, թոնիր վառի.
 Չեռնեքս լվացի, որ պտի նստի պատուխան.
 Պառավն ծեռս բռնեց. - Աղջի, դյու ո՞վ ես, - ասաց.
 Ասի. - Դյու ծիկ մեր, ես քե որդի.
 Էլանք մեր ու աղջիկ, մեյտեղ նստանք.
 Մեյ օր պառավ ասաց ծիկ.
 Թագավորու ծիեր տվեր ին պախ.
 Ասի. - Մեյն էլ դյու բեր, պախինք.
 Մեյ կոռտ ծի էլ պառավ իրե, ես պախեցի.
 Տանե տան ծին կու թիմրի, քուր կու խմցուցի.
 Չիու բուր կը պտըտի.
 Առույտ, խոտ ու ծաղիկ կու թափե.
 Թագավորու ծիանք գնացին, ժողվեցին.
 - Էրթանք, - ասին, - պառվու ծին բիրենք.
 Ասին. - Լա՛վ, լավ ծիանք որ խատուցին.
 Պառվու ծին էլ զաթի խատուկ էր.
 Էկան, ծին տիսան, զարմանք մացին.
 Չիուն ասին. - Էլի՛ վիր, էլի՛ վիր՝ չէլավ.
 Ասին. - Ո՞վ պիտի դյուս խանի ծիուն.
 - Մյունպարեքի մալ, վիր իլի, ասի.
 Չին թռավ, կայնավ, դյուս էլավ.
 Թագավորու լաճ իրիշկեց, ասաց.
 - Եսա ինչ զարմանք ծի ին պախեր.
 Թագավորու լաճուն կճից տղեմ էլավ.
 Էն տղեն ոչ քուն ուներ, ոչ դատարում.

Ուր միս վեր ուր ճանին կուտէր.

Թագավորու ճար կտրաւ.

Օրոխկեց, դավրեշ կանչեց. խարցուց.

Դավրեշ ասաց. - Էսա տղեն խալալ սիրո պտուղ չի.

Ձեր ծին շահող, պահող աղջիկը բեր.

Որ դեղ անե, օրորոցին մարգրիտ շարե.

Մարգրիտ կը շարեմ, գյառնիկ աղբոր վերեն կուլամ.

Մարգրիտ շարիմ, էսա օրորոց օրորիմ:

Թագավոր որ էսա խաղ լսավ, իմացավ ուր գլխու գյացած, կասի. -
Ծո՛, էսա ի՞նչ էլավ իմ գլխ:

Համան էն գյանխ ինե կուգյա՛մ, էն աղջկան կը գրկի, կը դնի վեր ուր
թախտին, արաբու պոկոշ կնիկ ուր տեղին մեջ պարկած կը քներ. կը
խոներ, կյի գիտես արջ մ'էր մտեր քիթ, էն գյանխ ինե թագավոր ուր ճալա-
տին կասի. ըդսնա չլութ-չլութ ուր տղեն կուտա կապել վըր ուր սրտին, կը
կապի էն ծիու պոչ, որ մեր աղջիկ էլեր մանիք:

Ձին ի, կառնի, սարեսար, քարեքար կը վազնի, մե կտոր Մաքյա՛ն կը
թողնի, մե կտոր Թեյիրան, ուր շահող աղջկան ոխ էնորից կառնի:

Թագավորն ի, հըմեն արարած աշխարհ ծեն կուտա որ հազրվեն
գյան խարսնիս:

Թագավորն ի, յիթ օր, յիթ գիշեր խարսնիս կանի, ուր խալալ
խարսնացուն կառնի:

Էսա էստեղ թողնենք, էրթանք տեխ խորթ մեր: Խորթ մերն ի, ինչ որ
կը լսի ուր սրտագյալար աղջիկ սգնա, սասուն պախտիմ՝ կը տիրանա, ուր
խալալ աղջկան կասի. - Աղջիկ, էլիր էրթանք, պախտի դուռ բացվեր ի,
բալքի քե ընդուցիմ ինոր տեղ:

Կառնի ուր Տիրամոր քյաշմշած աղջիկ կերթա, կը խասնի թագա-
վորու տուն, որ կյո խարսնիս կանեն: Թագավորու տուն կը զանվի չըխկ ու
չըխկ:

Կասեն. - Էն ո՞վ ի:

Կասի. - Բաց, խուրնի-խրեղեն աղջկան մերն իմ:

Աղջկն ի քյիշկից կիրիշկի, կը տիսնա որ ուր խորթ մերն ի, հավար
կը թալի ներս, բերել կուտա: Թագավորու լաճն էլ շատ կուրախանա:

Քյանի սհաթ կնցնի, աղջիկ տարան պիտի լողկցուցեն, որ փսայվի:

Խալվըներ խանին, դրին թաշտ, տարին որ մե խատ ջուր լցեն վրեն:
Աղջկան նստած թաշտ մանուշակով, գինեթոյուկով իլին լցվավ, էն տեղ
աղջկան վերցին, տարան նըստըցցին վեր թախտին: Ուր մոր կանչեցին,

էկավ, ուր խրեղեն ծամեր կսանտրէր: Ծամեր սանտրած գլխի որ կը ծծողեր՝ փունջ-փունջ վարդ ինձան ըռահան կը թափեր, շարան-շարան մարգրիտ կը թափեր: Որ ուր խերենական դարտեր միտք կէներ, կուլեր:

Խորթ մեր շարեց, զարդերեց արաց գյո երկնքի լուսնակ մը, իսկեց ուր առաջ, խետ ուր խորթ աղջկան գնաց պտղտեյիւ ծովափ: Տարավ ծովափ, ասաց. - Էկեք, մէյ խատ էլ ըստե լողկցեք:

Աղջիկներն ինչ խալվըներ խանին, մտան ծով: Սևավոր ճատին ինքն ուր աղջկան աչքով արաց, ոյիւս իխան, էն մեկել աղջիկ, արաց որ ոյիւսն էլլեր, բռնեց, քյարըմ կապեց ոտ, իթալ անյատակ ծով:

Աստղծու խրամանքով ծյուկն էկավ թել կտրեց, աղջիկ կուլ խտուր:

Խեղճ աղջիկ ընքյուր-ընքյուր իլաց մեջ ձկան փորին, ասաց. - Տղեն խորուք, մորուք պիտի ուրախանա:

Աղջկան արտըսքներ թափավ վեր ձկան ճիկրին, ճիկյար մռմռաց, ուր տփեց ըստե, ընտեղ, ասաց. - Վո՛ւյ, էս ի՞նչ սև էր էկավ իմ գլուխ:

Էսա թողնենք, գանք թեխ խորթ մեր: Խորթ մերն ի, մեկել աղջկան պիթուն խալվըներ ու զարդարանք խագուցի ուր տիրամոր քյաշմշկած ադավառկուն, կառնի, կտանի թագավորու տուն, կը խափի, կասի. - Իմ խալալ աղջիկ ընկյալ ծով, խեղդվալ:

Ուր աղջկան խետ թագավորու լաճ կը փսայվի:

Կը մնա, մեկ-երկու ամիս, թագավորու տնեցիք կասին.

«Էսա մեր խարս քյանի լվինք՝ մանուշակ, գինեբոյուկ կը թափեր, քյանի կուլեր, կը ծծողեր, վարդ, ըռեհան, մարգրիտ կը թափեր, մկա ինչ էլավ որ իղոնք կտռան»:

Դարձան, ասին. - Ձայիր ծննդկան ի, ինոր խամար ժյույ մը կտռեր ի, բան չկայ, ժյույ մ'էլ կէլնի, էդ Աստծու բանն ի:

Քեզի կասեմ, էս բանի վերեն մե օր Կլորակոտ ժամխարմ կէլնի, կոչնակ կառնի, կէրթա ծովափու տներաց մարդեր ժամ կանչեյիւ: Էդա աղորոնախառն կոչնգի քյանղցրիկ ձեն կէրթա, կը խասնի ծովու միջեն ոյուս էլած մորե մերկ պեպախթ աղջկան, որ կայնէր էր ծովու եզր, կը բաղդակոծվեր:

Ժամխար թող պտղտի ծովու պռուկ, փեյանք քե ասեմ, ո՛վ է էդա քլուք աղջիկ:

Է՛յ, քյի միտք կուզյա՞, էն աղջիկ որ թողուցինք ձկան փոր...

Չյուկն ուր ճկոի մռմռից աղջկան դարտ չկարաց տանի, կը բիրի, որտեղ որ կուլ էր տվե, էն տեղ ափ սրտից վեր կանի:

Աղջիկն ի, կէլնի կը կայնի էն տեղ, կը կանչի բարի լուսու սիրուն Քրիստոս, կասի. - Յա՛ Տիրամոր քյառսուն խինգ կանթեղ, քյո բարի լուսով շող մը թալ սևավորիս, բալքի ես ըստեղեն ազատվեմ:

Էսա կասի, կը նստի ծովափ քյարի վերեն. իրիշկի տեխ աղոթարան:

Էն գյախ Վարագա զղզղուն քյամին բարակ կոչնգիմ ծեն կը բերե ուր ակնջին, խաչ կը խանի ուր սիրտ, փառք կուտա Աստծուն:

Էսա տեղնի ժամխար, որ ուր տկըլ-տկըլ «Օրհնեալ է Աստված» ասելով կը մոտանա*:

Պառավի ճատի աղջիկը, մեկ օր զինք սուտ հիվանդ կը ձևացնե, կը հեծկըտա, տքա ու կուլա. թագավոր անդադար կը լինի, կը հարցնե, թե սիրտն ինչ կուզե, նա կը հայտնե, թե ոչինչ բանով չառողջանար, այլ իրեն Գյաննիկ աղբեր մորթեն, որո միսը ուտե, կառողջանա:

Թագավորը կը զարմանա, ինքն իրեն կասե. «Մինչև այժմ կինս կասեր թե Գյաննիկն իմ եղբայրս է. ինձ ավանդ հանձնեց, որ լավ պահպանեմ. այժմ կինս հիվանդացավ, խելքը ցնորեց»:

Կնոջ խնդիրը ուշացուց. - Սպասենք, - ասաց, - սորա վերջը:

Սորա վերան անցավ քանի օր, աղջկան մի ծայն հասավ որ յուր Գյաննիկ աղբերն էր կը պոռար. կասեր. - Ճատի աղջիկն դանակն է սրած, սուտ հիվանդ ձևացած որ զիս մորթեն:

Աղջիկն երբ ժամհարի կոչնակի ծայն կը լսե, տխուր-տխուր կերգէ:

Աղջիկ շաքրով իլին բերան կը բանա, ուր դարտեր խետ խառնելով ժամխրին տեխ ուր կը կանչի:

- Ժամխար-ժամխար, որ քյո՛ ժամ կը կանչես,

Յոթ խաչ որ ք յո՛ իրես կը խանես,

Քյո բարի լուսու Աստված կը սիրես.

Էրթաս թագավորու լաճուն ասես,

Որ իմ Գյաննիկ աղբեր չգինես.

Սուտ ու փնդոր խապար մտիկ չանես:

Քանի անգամ այս ծայնը կը կրկնվի, կերթան թագավորին կը հայտնեն, նա կը գա, կը գտնե յուր իսկական կինն. պատսպարե, կը տանե տուն, պառավի աղջիկն ծիու պոչը կը կապե:

* Սույն հեքիաթի վերջի մասը կորսված էր, համառոտությունը այստեղ ասի (ծ.ք.):